ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՄԲԻՈՆ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

(ուսումնական առարկայի անվանումը)

Մասնագիտություն/ուղղություն__Հայոց լեզու և գրականություն_____

Որակավորումը __Մանկավարժության բակալավր_

Ֆակուլտետ _____Հումանիտար գիտությունների_____

Ուսուցման ձև ____առկա, 7-րդ և 8-րդ կիսամյակ_____

հեռակա, 9-րդ և 10-րդ կիսամյակ

Հաստատված է ամբիոնի նիստում
(արձանագրություն 9, 31.01.2024թ.)
Ամբիոնի վարիչ՝ Հ. Բաբուռյան

Հաստատված է Հումանիտար գիտությունների ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդի նիստում
(արձանագրություն 11, 01.02.2024թ.)

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան՝ Մ. Բրուտյան

Կազմող(ներ) բ.գ.թ., դոցենտ Ա.Պողոսյան, մ.գ.թ., դոցենտ Ա. Եդոյան, բ.գ.թ., դոցենտ Հ. Բաբուռյան

Ա.Ա.Հ., պաշտոն, գիտ. աստիճան, կոչում

Վանաձոր 2024

Հայոց լեզվի և գրականության դասավանդման մեթոդիկա

առարկայի արտադրական պրակտիկա

1. Պրակտիկայի նպատակը՝

1.1 հայոց լեզվի և գրականության ապագա ուսուցչին ծանոթացնել կրթական չափորոշչի պահանջներին և մշակել այդ պահանջներից բխող կրթական գործընթաց կազմակերպելու համար նախատեսված ուսումնական միավորներ,

1.2 բուհական տվյալ դասընթացի գործնական պարապմունքների ընթացքում և պրակտիկայի նախորդ փուլում ուսանողների ձեռք բերած գիտելիքները հմտությունների վերածելու ունակության ձևավորում,

1.3. կուրսային և ավարտական աշխատանքների կատարման համար անհրաժեշտ նյութերի հավաքագրում,

1.4 ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ առանձին թեմատիկ միավորների ստեղծագործաբար օգտագործելու ունակության ապահովում:

2. Պրակտիկայի խնդիրները՝

2.1. ուսանողներին սովորեցնել թեմատիկ նյութերի մեթոդական լիարժեք մշակման հմտություններ,

2.2 զարգացնել ուսանողի վերլուծական, դատողական և հետազոտական ունակությունները,

2.3 ուսանողներին հաղորդակից դարձնել ուսուցման ժամանակակից պահանջներին, դպրոցում մեթոդմիավորման կողմից իրականացվող աշխատանքներին:

3.Պրակտիկայի հաստատությունը, վայրը

Վանաձոր քաղաքի թիվ 1, 2, 3, 20 միջնակարգ դպրոցներ, ՎՊՀ-ի վարժարան (անհրաժեշտության դեպքում՝ ըստ պրակտիկանտի դիմումի): Ընտրությունը պայմանավորված է նշված դպրոցներում արտադրական պրակտիկա իրականացնելու տարիների փորձով, փորձառու մասնագետների առկայության փաստով, իսկ 20-րդ դպրոցն ու ՎՊՀ-ի վարժարանն այդ ցանկում ընդգրկվել են ուսանողների առաջարկությամբ՝ առաջին հերթին հմուտ և առաջնակարգ մասնագետների առկայության, ինչպես նաև նրանց գտնվելու վայրի հարմարավետության հիմնավորմամբ:

4. Պրակտիկայի ընթացակարգը

«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության առկա 4-րդ և հեռակա 5-րդ կուրս

<u>Ա.</u> Ուսումնասիրել արտադրական պրակտիկայի ծրագիրը, նախանշել անելիքները:

- Պրակտիկան սկսվելուց երկու շաբաթ առաջ ուսումնասիրել պրակտիկայի անցկացման ժամանակահատվածում տվյալ առարկայի ծրագիրը, թեմատիկ պլանները, չափորոշիչը, դասագրքերի՝ դրան համապատասխանող հատվածի բովանդակությունը:

- Լինել դպրոցում, պատկերացում կազմել տվյալ առարկայի ժամաքանակի, դասացուցակի, դասարանների առանձնահատկությունների մասին:
- Մասնակցել արտադրական պրակտիկայի կոնֆերանսին, ուսանողներին ծանոթացնել պրակտիկայի ծրագրին, պրակտիկանտի պարտականություններին և իրավունքներին, օրագրի վարման կարգին:
- Լրացնել օրագրի «Պրակտիկայի նպատակը» էջի համապատասխան տողերը, օգնել պրակտիկանտին ներկայացնել պրակտիկայի անհատական պլանը օրագրի «Անհատական պլան» բաժնում:

Բ. Նախապես կազմած օրացուցային պլանի համաձայն՝ իրականացնել հետևյալ աշխատանքները:

- Ուսանող-պրակտիկանտներին նախապատրաստել դասերին՝ ըստ հավելվածում ներկայացված ալգորիթմի, նրանց հետ միասին կազմել դասի պլանը* և այն հաստատել պարապմունքից 1-2 օր առաջ:
- Դասալսումներ իրականացնել, անպայմանորեն քննարկել դրանք, կազմել քննարկման արձանագրություն և ներկայացնել ամբիոն:
- Հետևել պրակտիկանտի կողմից պրակտիկայի օրագրի ժամանակին և մեթոդապես ճիշտ վարմանը և պատասխանատվություն կրել դրա համար:
- Առարկայի ուսուցչի հետ միասին ղեկավարել արտադասարանական առարկայական միջոցառումների կազմակերպման աշխատանքները:
- Հետևել պրակտիկանտների հաճախմանը, բացակայության դեպքում տվյալները ներկայացնել դեկանատ, պրակտիկայի բաժին:

5. Պրակտիկայի ղեկավարների (այդ թվում պրակտիկայի անցկացման վայրի աշխատակից ղեկավարի) պարտականությունները, գործառույթների նկարագրությունը

5.1. Պրակտիկայի նախապատրաստական փուլում իրականացվող աշխատանքներ.

- Ուսումնասիրել արտադրական պրակտիկայի ծրագիրը, նախանշել անելիքները:
- Պրակտիկան սկսվելուց երկու շաբաթ առաջ ուսումնասիրել պրակտիկայի անցկացման ժամանակահատվածում տվյալ առարկայի ծրագիրը, թեմատիկ պլանները, չափորոշիչը, դասագրքերի՝ դրան համապատասխանող հատվածի բովանդակությունը:
- Լինել դպրոցում, պատկերացում կազմել տվյալ առարկայի ժամաքանակի, դասացուցակի, դասարանների առանձնահատկությունների մասին:
- Մասնակցել արտադրական պրակտիկայի կոնֆերանսին, ուսանողներին ծանոթացնել պրակտիկայի ծրագրին, պրակտիկանտի պարտականություններին և իրավունքներին, օրագրի վարման կարգին:
- Լրացնել օրագրի «Պրակտիկայի նպատակը» էջի համապատասխան տողերը, օգնել պրակտիկանտին ներկայացնել պրակտիկայի անհատական պլանը օրագրի «Անհատական պլան» բաժնում:

Պրակտիկայի սկզբնական փուլում դպրոցում իրականացվող աշխատանքներ՝

- Պրակտիկայի առաջին օրը ուսանողների հետ միասին այցելել դպրոց և նրանց ներկայացնել դպրոցի տնօրենությանը, համապատասխան մասնագետներին:
- Ծանոթացնել առարկայի ուսուցչին պրակտիկայի ծրագրին, պրակտիկանտների հետ:
- Մասնակցել ուսանողների բաշխմանը ըստ դասարանների՝ հաշվի առնելով, որ յուրաքանչյուր ուսանող պետք է պարապի ամենաքիչը 6 դաս մեկ դասարանում կամ մի քանի դասարանում, ինչը պրակտիկայի ծրագրի կատարման պահանջ է:
- Մասնակցել նաև ըստ դասղեկների ուսանողների բաշխմանը՝ հետևելով, որ մեկ դասարանում պրակտիկանտների թիվը չգերազանցի 3-4-ը:
- Կազմել աշխատանքային գրաֆիկ, օրացուցային պլան պրակտիկայի ընթացքում կատարելիք աշխատանքների վերաբերյալ և ներկայացնել այն ամբիոն:

5.2. Պրակտիկայի ընթացքում իրականացվող աշխատանքներ

Նախապես կազմած օրացուցային պլանի համաձայն՝ իրականացնել հետևյալ աշխատանքները.

- Ուսանող-պրակտիկանտներին նախապատրաստել դասերին՝ ըստ հավելվածում ներկայացված ալգորիթմի, նրանց հետ միասին կազմել դասի պլանը* և այն հաստատել պարապմունքից 1-2 օր առաջ:
- Դասալսումներ իրականացնել, անպայմանորեն քննարկել դրանք, կազմել քննարկման արձանագրություն և ներկայացնել ամբիոն:
- Հետևել պրակտիկանտի կողմից պրակտիկայի օրագրի ժամանակին և մեթոդապես ճիշտ վարմանը և պատասխանատվություն կրել դրա համար:
- Առարկայի ուսուցչի հետ միասին ղեկավարել արտադասարանական առարկայական միջոցառումների կազմակերպման աշխատանքները:
- Հետևել պրակտիկանտների հաճախմանը, բացակայության դեպքում տվյալները ներկայացնել դեկանատ, պրակտիկայի բաժին:

5.3. Պրակտիկայի ավարտից հետո իրականացվող աշխատանքներ

- Պրակտիկայի ավարտին օրագրում բնութագրել պրակտիկանտի կատարած աշխատանքը, գնահատել նրան:
- Դեկանատ ներկայացնել իրեն կցված բոլոր ուսանողների պրակտիկայի ծրագրով պահանջվող փաստաթղթերը պատշաճ վիճակով:
- Մասնակցել պրակտիկայի պաշտպանությանը, պրակտիկանտի վերջնական գնահատականի ձևավորմանը:

6. Պրակտիկանտի պարտականություններն ու իրավունքները

- պրակտիկայի նախապատրաստական փուլում մեթոդիստը պարտավոր է ուսանողներին ծանոթացնել առարկայի ծրագրին ու դասագրքերին,

- պրակտիկայի ընթացքում մեթոդիստը պարտավոր է պարբերաբար դասալսումներ անցկացնել ուսանողների մոտ և քննարկել՝ վեր հանելով թերություններն ու դրական կողմերը,
- պրակտիկայի ավարտից հետո մեթոդիստը պարտավոր է ընդհանրացնել ուսանողների կատարած աշխատանքը հայոց լեզվից և գրականությունից:

Ուսանողների ուսումնական արտադրական պրակտիկայի օրացուցային պլան

Պրակտիկայի ժամանակա-հատվածը	**Աշխատանքի բովանդակությունը**	**Պատասխանատու**	
1-ին շաբաթ	Պրակտիկայի առաջին օրը ուսանողների հետ միասին այցելել դպրոց և նրանց ներկայացնել դպրոցի տնօրենությանը: Մասնակցել ըստ դասարանների ուսանողների բաշխմանը՝ հաշվի առնելով, որ յուրաքանչյուր ուսանող պետք է պարապի ամենաքիչը 6 դաս: Ուսանողներին ծանոթացնել առարկայի ուսուցիչների հետ, նրանց հետ քննարկել պրակտիկայի ծրագիրը, պրակտիկանտների պարտականությունները: Ուսանող-պրակտիկանտներին նախապատրաստել դասերին, նրանց հետ միասին կազմել դասի պլանը և այն հաստատել պարապմունքից 1-2 օր առաջ:	Պրակտիկայի ղեկավար	Պրակտիկայի անցկացման վայրի աշխատակից ղեկավար
2-րդ շաբաթ	Դասալսումներ իրականացնել, անպայմանորեն քննարկել դրանք, կազմել քննարկման արձանագրություն և ներկայացնել ամբիոն:	Պրակտիկայի ղեկավար	Մանկավարժ
3-րդ շաբաթ	Հետևել պրակտիկանտի կողմից պրակտիկայի օրագրի ժամանակին և մեթոդապես ճիշտ վարմանը և պատասխանատվություն կրել դրա համար:	Պրակտիկայի ղեկավար	Մանկավարժ
4-րդ շաբաթ	Առարկայի ուսուցչի հետ միասին ղեկավարել արտադասարանական առարկայական միջոցառումների կազմակերպման աշխատանքները: Ընդհանրացնել ուսանողների կատարած աշխատանքը:	Պրակտիկայի ղեկավար	Պրակտիկայի անցկացման վայրի աշխատակից ղեկավար

7. Պրակտիկայի հաշվետու փաստաթղթերը

Արտադրական պրակտիկաների համար նախատեսված օրագիրը, օրվա պլանի մեկ օրինակ: Եթե պրակտիկայի ընթացքում ուսանողների կողմից կազմակերպվել է որևէ միջոցառում կամ բաց դաս, ապա ներկայացնում են տվյալ միջոցառման ծրագիրը, բաց դասի հետ կապված նյութերը:

8.Պրակտիկայի գնահատումը

Բազմագործոնային համակարգով ներկայացնել առավելագույն 100 միավորի բաղադրիչները, գնահատման կարգը՝ որ բաղադրիչը ում կողմից է գնահատվելու, ամփոփման կարգն ու ժամկետները, որոնք հիմնված են ՎՊՀ «Պրակտիկայի կանոնակարգ»-ի վրա:

Պրակտիկայի գնահատման բաղադրիչները և հատկացվող միավորները (գնահատականը՝ ըստ 100-միավորանոց սանդղակի)

Գնահատման բաղադրիչները	Հատկացվող միավորը	Գնահատում	
1. Հաճախում	0 - 10		
2. Առարկայի իմացություն	0 - 20		
3. Վարած դասերի վերլուծություն • Կիրառված մեթոդների արդյունավետություն • Նորագույն տեխնոլոգիաների կիրառում ` 1. համակարգչային տեխնոլոգիաների կիրառում 2. այլ տեխնոլոգիաների կիրառում • դասաժամանակի ճիշտ օգտագործում • գնահատում	 0 - 7 0-3 0-1 0-3 0-6		
4. Մանկավարժական աշխատանք • արտադասարանային աշխատանքի կազմակերպման կարողություն • դասղեկի ժամի անցկացում, աշխատանք աշակերտական խորհրդի հետ • մանկավարժական հաղորդակցման մշակույթ	 0 - 5 0 - 5 0 - 5		
5. Հոգեբանախորհրդատվական աշխատանք • աշակերտի կամ դասարանի կոլեկտիվի հոգեբանական բնութագրի կազմում • դասի հոգեբանամանկավարժական վերլուծության անցկացում • արտադասարանային միջոցառման հոգեբանական հիմնավորում	 0 - 5 0 - 5 0 - 5		
Պրակտիկայի պաշտպանություն	0 - 20		

Ընդհանուր միավորը	100	

Պրակտիկան գնահատվում է ըստ սահմանված չափանիշների՝ բազմագործոնային համակարգով՝ պրակտիկայի ընթացքում ձեռք բերված կարողությունների, հմտությունների, կոմպետենցիաների հիման վրա:

Արտադրական պրակտիկայի հաճախումների հատկացվող միավորները՝ ըստ ուսանողի մասնակցության աստիճանի

Մասնակցության աստիճանը %	**Հատկացվող միավորը**
96-100	10
91-95	8
86-90	6
81-85	4
76-80	2
0-75	0